| *Կազմեց* | *Հաստատեց* |
|---|---|
| Հաշվապահական հաշվառման վարչության պետ- գլխավոր հաշվապահ՝<br><br>Դ. Ազատյան<br><br>«28» 12.2021թ. | Տնօրինության նախագահի ժ/պ՝<br><br>Հ. Հակոբյան «31» 01.2022թ.<br><br>Տնօրինության անդամներ՝<br><br>Վ.Դալյան «31» 01.2022թ.<br><br>Գ.Հարությունյան «31» 01.2022թ.<br><br>Գ. Բաղդասարյան «31» 01.2022թ.<br><br>Ա. Նահապետյան «31» 01.2022թ.<br><br>Դ. Ազատյան «29» 01.2022թ.<br><br>Ա. Զաքարյան «31» 01.2022թ.<br><br>Ս.Խաչատրյան «31» 01.2022թ. |

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.1.** «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրանցված սեփականատերերին (անվանատերերին) մատուցվող պահառության ծառայությունների սակագները և դրույքները (այսուհետ՝ Սակագներ) սահմանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրանցված սեփականատերերին (անվանատերերին) մատուցվող պահառության ծառայությունների պայմանները, որոնք ներկայացվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

| | Ծառայության տեսակ | Սակագին |
|---|---|---|
| **1.** | ***Դեպո հաշվի բացում*** | |
| 1.1. | Ֆիզիկական անձի համար | անվճար |
| 1.2. | Իրավաբանական անձի համար | անվճար |
| 1.3. | Դեպո հաշվի սպասարկում[1] | Ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հաճախորդների համար՝ 3,000 ՀՀ դրամ տարեկան, իրավաբանական անձ հաճախորդների համար՝ 5,000 ՀՀ դրամ տարեկան |
| 1.4. | Բանկի ներդրումային ծառայություններից օգտվող հաճախորդների դեպո հաշվի սպասարկում | անվճար |
| **2.** | ***Արժեթղթերի մուտքագրում հաճախորդի դեպո հաշվին*** | |
| 2.1. | Արժեթղթերի մուտքագրում հաճախորդի դեպո հաշվին | անվճար |
| **3.** | **Արժեթղթերի փոխանցում** | |
| 3.1. | Արժեթղթերի ներպահառուական փոխանցումներ | 200 ՀՀ դրամ |
| 3.2. | Արժեթղթերի միջպահառուական փոխանցումներ | 1,000 ՀՀ դրամ |
| 3.3. | Որակավորված ներդրողներին պատկանող արժեթղթերի ներպահառուական և միջպահառուական փոխանցումներ[2] | Անվճար |
| 3.4. | | |

[1] Միջնորդավճարը գանձվում է եռամսյակը մեկ անգամ տարեկան միջնորդավճարի չափը բաժանելով 4-ի:
[2] Որակավորված ներդրողներ են համարվում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետով սահմանված անձինք

| | | |
|---|---|---|
| | Արժեթղթերի փոխանցում Բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման գործարքի արդյունքում | անվճար |
| **4.** | ***Արժեթղթերի արգելադրում և գրավադրում*** | |
| 4.1. | Արժեթղթերի ներպահառուական արգելադրում և/կամ գրավադրում | 2,000 ՀՀ դրամ |
| 4.2. | Արժեթղթերի միջպահառուական արգելադրում և/կամ գրավադրում | 5,000 ՀՀ դրամ |
| 4.3. | Առևտրային արգելադրում | 1,000 ՀՀ դրամ |
| 4.4. | Որակավորված ներդրողներին պատկանող արժեթղթերի ներպահառուական և միջպահառուական արգելադրում (գրավադրում) և/կամ առևտրային արգելադրում | անվճար |
| 4.5. | Արժեթղթերի ներպահառուական և միջպահառուական արգելադրում, առևտրային արգելադրում և/կամ գրավադրում Բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման գործարքի արդյունքում | անվճար |
| **5.** | ***Արժեթղթերի արգելադրման և գրավադրման դադարեցում*** | |
| 5.1 | Արժեթղթերի ներպահառուական արգելադրման և/կամ գրավադրման դադարեցում | 500 ՀՀ դրամ |
| 5.2 | Արժեթղթերի միջպահառուական արգելադրման և/կամ գրավադրման դադարեցում | 1,000 ՀՀ դրամ |
| 5.3 | Առևտրային արգելադրման դադարեցում | 500 ՀՀ դրամ |
| 5.4. | Որակավորված ներդրողներին պատկանող արժեթղթերի ներպահառուական և միջպահառուական արգելադրման (գրավադրման) և/կամ առևտրային արգելադրման դադարեցում | անվճար |
| 5.5. | Արժեթղթերի ներպահառուական և միջպահառուական արգելադրման, առևտրային արգելադրման և/կամ գրավադրման դադարեցում Բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման գործարքի կնքման արդյունքում (նպատակով) | անվճար |
| **6.** | ***Քաղվածքների և տեղեկանքների տրամադրում*** | |
| 6.1. | Քաղվածքների և տեղեկանքների տրամադրում | անվճար |

## 2. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**2.1.** Սույն Սակագներով սահմանված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ դրամով:

**2.2.** Հաճախորդի ՀՀ դրամային հաշվին գանձման համար անհրաժեշտ դրամական միջոցների բացակայության դեպքում միջնորդավճարը գանձվում է հաճախորդի` Բանկում սպասարկվող այլ հաշիվներից:

**2.3.** Բանկի կողմից գանձված Սակագները վերադարձման ենթակա չեն` բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս գանձվել են սխալմամբ

**2.4.** Բանկը կարող է գործող Սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին` փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի Տնօրինության կողմից սահմանված ժամկետներում, բայց դրանց մասին հաճախորդներին պատշաճ կերպով ծանուցելու օրվանից ոչ շուտ: